ՀԱԿՈԲ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՆ ԸՍՏ ՊԼԻՆԻՈՍ ԱՎԱԳԻ «ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ»

Հին Հայաստանի պատմա-աշխարհագրական և վարչա-քաղաքական հիմնահարցերի ուսումնասիրության խնդրում անուրանալի է անտիկ (հունա-հռոմեական) պատմագրության ունեցած դերն ու նշանակությունը: Այդ շարքում առանձնահատուկ տեղ են զբաղեցնում պատմիչ-աշխարհագրագետները՝ ի դեմս Ստրաբոնի, Պլինիոս Ավագի և Կլավդիոս Պտղոմեոսի: Պլինիոս Ավագի (Plinius Secundus – 23/24-79թթ.) գրչին է պատկանում «Բնական պատմություն» (Naturalis historia) հանրագիտարանային բնույթի աշխատությունը, բաղկացած 37 գրքերից, որտեղ հեղինակը բավականին պատշաճ ուշադրություն է հատկացնում նաև հին Հայաստանին: Դրանք հիմնականում ամփոփված են նրա աշխատության V- VI գրքերում և վերաբերում են ոչ միայն բուն պատմությանը, այլև պատմական և ֆիզիկական (լեռնագրություն, ջրագրություն, օգտակար հանածոներ...) աշխարհագրության հիմնահարցերին:

Այս առումով նրա հայեցակարգն էապես տարբերվում է պատմական-աշխարհագրության և քարտեզագրության հանդեպ ունեցած այն աշխարհընթռնումից, որը բնորոշ էր վերոհիշյալ մյուս երկու պատմիչ-աշխարհագրագետներին: Ստրաբոնի մոտ առաջնային են վարչական տարածքները, իսկ Պտղոմեոսը ուշադրություն է հատկացնում ամեն ինչին՝ սկսած վարչական բաժանումներից և վերջացրած լեռնագրությամբ, ջրագրությամբ, ժամային գոտիներով... Պլինիոսն իր աշխատությունում վարչական անվանումներին անդրադառնում է, երբ չունի որևէ ուրիշ այլընտրանք, և կարծես թե, դա կրում է հարկադիր (ստիպողական) բնույթ: Այս պատճառով էլ նա ևս մյուսների նման հիշատակում է Սոֆենեն, որպես երկիր, ինչպես նաև Կարենիտիսը, Դերզենե, Ակիլիսենեն, որպես պրեֆեկտուրաներ:[1] Նրա այսպիսի մոտեցումը ոչ թե ժուժկալության, այլ հայեցակարգի արտահայտություն է, քանզի հեղինակի խնդիրն է շարադրել «Բնական պատմություն» և ոչ թե «Պատմություն»: Այս պատճառով էլ նրա մոտ իսպառ բացակայում է իրադարձությունների նկարագրման հաջորդական շարադրանքը, որոնց նա անդրադառնում է միայն սպոնտան (պատահական) ձևով: Մենք նույնիսկ չգիտենք, թե՞ ով է իշխել այդ ժամանակ Հայաստանում, կամ գոնե, որ հարստության ժամանակ կատարված իրադարձություններն է նա նկարագրում: Այս ամենի արդյունքում էլ, նա անուններ տալիս է ծայրահեղ դեպքում, եթե նպատակ ունի ապացուցելու ինչ-

որ բան (օրինակ արևի խավարումը, թե ում օրոք է եղել):

Այսուհանդերձ, պետք է խոստովանել ի սկզբանե, որ Պլինիոսի վկայություններից մեկը՝ հին Հայաստանի վարչա-քաղաքական կացության վերաբերյալ ունի հույժ կարևոր նշանակություն: Մեր կարծիքով այն առայժմ կարոտ է հատուկ ուշադրության և վերանայման: Պլինիոսը Հայաստանի կապակցությամբ վկայում է. «Ստույգ է, որ նա (խոսքը վերաբերում է Մ. Հայքին – Հ.Հ.) բաժանված է ստրատեգիաներ կոչված պրեֆեկտուրաների, որոնցից մի քանիսը թագավորություններ պիտի կազմեին հնում: Նրանք թվով 120 են, և բարբարոսական անուններ ունեն»[2] Նախ տեսնենք, թե ի՞նչ իմաստավորում ունեն այս տերմինները: Առաջին տերմինը՝ praefectura կամ praefectus ունի լատինական ծագում, բազմիմաստ բառ է, և զուտ զինվորականից բացի, ունի նաև քաղաքացիական երանգավորում: Այն նշանակում է նաև վերակացու, բարքերի հսկիչ, կուսակալ կամ կողմնակալ.. Այս տերմինին համարյա համարժեք է հին հունական strategia բառը, որը թարգմանվում է որպես զորավարություն:[3] Պլինիոսի այս վկայության վերլուծությունն առավել նպատակահարմար է սկսել վերջից: Ակադ. Ս. Երեմյանն իրավացիորեն գտնում է, որ անվանելով «բարբարոսական» հեղինակը նկատի ունի այն հանգամանքը, որ հայկական տեղանունները հունա-հռոմեական չէին, և կամ գոնե նման չէին: Երևի արտասանության ժամանակ դա նրանց մոտ առաջացրել է որոշ լրացուցիչ դժվարություններ: Նա նաև լիովին իրավացի է, երբ գտնում է, որ այդ 120-ը կարող է առնչվել մինչարշակունյաց Հայաստանին (գտնում են, որ հեղինակն իր աշխատության շարադրումն ավարտել է մ.թ. 77թ.):[4] Եթե օբյեկտիվորեն դիտարկենք քաղաքական իրադարձությունների զարգացման ժամանակագրական ընթացքը, ապա Արտաշիսյանների բարձումից մինչև Արշակունիների գահակալության սկիզբը, այսպիսի վարչա-քաղաքական բաժանում անհնարին էր իրագործել, իսկ ավելի ստույգ ոչ մեկին անգամ պետք չէր բարեփոխել երկրի ներքին կացությունը, քանզի երկրում իշխում էին օտարազգի դրածո թագավորները: Դա պարզ է յուրաքանչյուրին, ով գոնե ամենահամառոտ ձևով ծանոթ է այդ ժամանակ Հայաստանում տեղի ունեցող պատմական դեպքերի զարգացման ընթացքին՝ Արտաշիսյանների անկումից մինչև Արշակունիների պատմական թատերաբեմ իջնելը: Ուրեմն մնում են Արտաշիսյանները, իսկ նրանց արքայացանկում իր բարենորոգչական գործունեությամբ առանձնանում է առաջին հերթին Արտաշեսը: Տիգրան II Մեծի (մ.թ.ա. 95-55թթ.)կապակցությամբ պետք է նշել, որ նա իր գահակալության տարիների մեծ մասն հատկացրեց աշխարհակալ կայսրության կազմակերպման խնդիրների իրականացմանը, և ինչպես ցույց է տալիս պատմության

զարգացման բնականոն ընթացքը՝ Հայաստանի վարչա-քաղաքական բաժանման համակարգը նրան լիովին բավարարում էր։ Ինչ վերաբերում է նրա որդուն՝ Արտավազդ II-ին(մ.թ.ա. 55-34թթ.), ապա վերջինս իր կամքից անկախ, հարկադրված էր պատերազմել Հռոմի կողմից Արտաշիսյան Հայաստանի դեմ սանձազերծած պատերազմում, ուստի ժամանակ չուներ մտածելու վարչա-տարածքային փոփոխություններ կատարելու մասին։ Այսպիսով, առավել հավանական թեկնածուն մնում է Արտաշեսը։

Այժմ մեզ անհրաժեշտ է պարզաբանել, թե ինչ հիմքեր կարող է ունենալ Պլինիոսի հիշատակած 120 պրեֆեկտուրաների կամ ստրատեգիաների մասին վկայությունը։ A priori կարելի է ենթադրել, որ Պլինիոսի մոտ կա շփոթմունք, որ պետք է լիներ 12, 10 կամ էլ 20, այսինքն՝ թվերից մեկն ավելի ուշ, թյուրիմացաբար ավելացվել է ձեռագիրն արտագրողների կողմից։ Այս դեպքում պետք է եզրակացնել, որ պատմիչը նկատի է ունեցել Մեծ Հայքի աշխարհները կամ նահանգները։ Բայց սա ևս անհնարին է, քանզի մեզ հայտնի 15 նահանգները ավելի ուշ շրջանի արտահայտություն են։ Ստացվում է, որ պլինիոսյան 120-ի և «Աշխարհացույց»-յան 190-ի միջև կա ինչ-որ մի անհայտ կապ, որը սակայն անհրաժեշտ է ապացուցել։ Վերոհիշյալ քննարկումից փաստորեն մենք կարողացանք նախ և առաջ պարզաբանել, որ հռոմեացի մատենագիրը խոսում է, կամ նկատի ունի Մեծ Հայքի գավառային բաժանումները, որպես վարչա-տարածքային բաժանումների հիմնական միավորներ։

Պլինիոսի «Պատմությունը» քաջ հայտնի է բոլորին և յուրաքանչյուրին, որ ստրկատիրության ծաղկման և բարգավաճման ժամանակաշրջանին վերաբերող սկզբնաղբյուր է, իսկ «Աշխարհացույց»-ը՝ վաղ ֆեոդալիզմին կամ ավատատիրությանը (վերջինս, ինչպես հիմնավորաբար ապացուցված է այժմ, գրվել է V դարում)։[5] Արշակունյաց Հայաստանում, ինչպես ժամանակի մյուս բոլոր քաղաքակիրթ երկրներում ֆեոդալիզմի սաղմերը ձևավորվեցին III դարում, հիմնական անցումը կատարվեց IV, իսկ վերջնականապես հաստատվեց V դարի սկզբներին։ Այժմ մեզ անհրաժեշտ է համադրել այս երկու հասարակարգերը՝ խնդրի վարչա-քաղաքական քննության տեսանկյունից։ Ստրկատիրական դարաշրջանի պետությունը, դա կենտրոնացված, վարչա-տարածքային առումով սահմանափակ մասերի բաժանված կառույց էր, որի դասական օրինակ կարող է հանդիսանալ հին արևելյան թագավորություններից ցանկացածը։ Ողջ հին աշխարհի կապակցությամբ միակ բացառությունը, որ կարելի է անել այս կապակցությամբ, հին Հունաստանն է, ուր յուրաքանչյուր քաղաք նաև պետություն էր։ Նույնպիսի կառույց ուներ նաև այս դարաշրջանի հասարակությունը, որտեղ թագավորից ներքև գտնվում էին ազնվականները,

ազատները և ստրուկները: Ֆեոդալական հասարակարգն ունի խայտաբղետ, այսինքն՝ բազմախավ և բազմատարր կառուցվածք:[6] Այս ամենի մասին է խոսում թեկուզև այն փաստարկը, որ Արշակ Բ-ի կողքն էին նստոսմ աշխարհաժողովների ժամանակ, ինչպես վկայում է Փավստոսը, մոտ 900 տարբեր իրավասությունների սահմաններ ունեցող գործակալներ, չհաշված մյուս մեծամեծերը... Պատմիչը վկայում է. «Եւ այլ յայսմ ազգաց և ի խոնարհ որ գործակալս անուն բարձիւք առաջի արքային պատիւ ի գլուխ բազմէին, թող զնահապետս մեծամեծս և զտանուտեարս՝ որք գործակալք միայն էին, ինն հարեւր բարձ՝ որ մտանէր ի ժամ տաճարին ուրախութեանն բազմակալացն կարգելոց թող զոտնկայս գործակալութեանն սպասու»:[7] Ն. Ադոնցը բազմակողմանի վերլուծության ենթարկելով այս վկայությունը, ինչպես նաև համադրելով «Վարք Ներսեսի» սկզբաղբյուրի հետ, ուր 900-ը փոխարինված է 400-ով գտնում է, որ այս երկուսում էլ առկա է ակնհայտ թյուրիմացություն, և եզրակացնում է. «Այդ թվերը չեն արդարացնում Հայաստանի նախարարությունների քանակին բերաբերող նաև այլ տվյալներով»:[8] Ինչպիսի թիվ էլ լինի, այնուհանդերձ նրանցից յուրաքանչյուրը ուներ մի նպատակ՝ դառնալ աշխարհատեր իշխան կամ նախարար: Հենց այս պատճառով էլ նրանք կանգ չէին առնում ոչնչի առաջ և պատրաստ էին հաղթահարելու ցանկացած անանցանելի խոչընդոտ: Փավստոսի «Հայոց պատմությունը» հեղեղված է ներֆեոդալական այդպիսի մրցակցությունների նկարագրությամբ, որտեղ նրանցից և ոչ մեկը տարբերություն չէր դնում պայքարի ձևերի միջև: Այս պատճառով էլ լինում էին նույնիսկ դավաճանության դեպքեր: Ինչ վերաբերում է Արշակունիներին, ապա նրանք, բնականաբար ոչ թե դիտորդի դերում էին, այլ նույնպես օգտագործում էին բոլոր հնարավոր մեթոդները՝ պետության միասնությունն ու հզորությունը պահպանելու համար: Պլինիոսի 120-ի և «Աշխարհացույց»-ի 190-ի համադրությունն ապացուցում է, որ այնպիսի լիազորություններ, ինչպիսին որ ունեին, ի սկզբանե վերոհիշյալ 120-ը, և ժամանակի ընթացքում՝ ֆեոդալիզմի հաստատմամբ ստացել էին ևս 70-ը՝ դառնալով մեծամեծ և աշխարհատեր: Մյուսները գտնվելով այդ սանդղակից դուրս ձգտում էին դրան: Այսպիսով, ինչպես աշխարհի մյուս երկրներում, այնպես էլ Հայաստանում տեղի էր ունենում հողերի պարցելացում կամ մասնատում: Սա ֆեոդալիզմի էությունն էր, որ մյուս երկրների նման բնորոշ էր նաև Հայաստանին:

Որպեսզի պարզ լինի, թե ինչպես է կատարվել պլինիոսյան ստրատեգիաների տրոհումն ու մասնատումն ավելի փոքր վարչա-տարածքային միավորների՝ քննության ենթարկենք Մեծ Հայքի «Աշխարհացույց»-յան 15 նահանգներից ցանկացած մեկը՝ օրինակ Վասպուրականը, որպես թվով

ամենաշատը՝ 35 գավառներ ունեցող նահանգ: Եթե Վասպուրականի տարածքը՝ 40.870կմ.^{2} բաժանենք գավառների թվի վրա, ապա միջին հաշվով կստացվի 1.167կմ.^{2} : Սակայն այստեղի մեկ տասնյակից ավելի գավառներ զբաղեցրել են այնքան տարածք, որքան ունեին հին հունական պոլիս (քաղաք)-պետությունները: Հունական Արգոսն օրինակ ուներ 1.400կմ.^{2} տարածք, Փոկիսի 22 պոլիսներից յուրաքանչյուրը՝ 70-75, Ատտիկան՝ 2.250... Այժմ վերադառնանք Վասպուրականին: Այստեղի Գուկանք գավառն ունեցել է 225կմ.^{2} տարածք, Արտաշիսեանը՝150, Պալունիքը՝ 200, Մեծնունիքը՝ 475, Կրճունիքը՝ 800, Աղանդ-Ռոտը՝ 850, Վարաժնունիքը՝ 150, Գազրիկանը՝ 600 (?), Տայգրեանը՝ 375, Բոգունիքը՝ 275, Տոսպը՝ 475, Կուղանովիտը՝ 370, Բուժունիքը՝ 400: Հետևելով Ս.Տ. Երեմյանի կարծիքին, այս ցուցակից մենք առայժմ դուրս ենք թողնում Պարսպատունիքը, քանզի ակադեմիկոսը նրան «հատկացնում» է 5.550կմ.^{2} տարածք:[9] Այս խնդիրն իր իրավացի պարզաբանումն է ստացել Բ.Հ. Հարությունյանի կողմից: Նա գրում է. «Ամբողջությամբ համաձայնելկով հեղինակի հետ (խոսքը Ս.Տ. Երեմյանի մասին է - Հ.Հ.)Բասորոպեդայի՝ Վասպուրականի հետ նույնացման հարցում, մենք չենք կիսում Ս.Տ. Երեմյանի տեսակետը Բասորոպեդան Պարսպատունիքին համարժեք հայտարարելու և վերջինս էլ Ղարադաղում տեղադրելու խնդրում: Ընդամենը 50 զինվոր մարտադաշտ դուրս բերող Պարսպատունիքի իշխանը, չէր կարող տիրել այդպիսի մեծ տարածքի, և որ կարևորն է, ինչպես ցույց կտա հետագա քննությունը, Պարսպատունիքը չէր կարող երբեք գտնվել Կարմիր կամ Կոտոր գետից արևելք ընկած շրջանում»:[10] Այս ցուցակից Բ.Հ. Հարությունյանը, ինչպես տեսանք, հարցականի տակ է դնում Գազրիկանի լինելիության խնդիրը, իսկ գաճաճ կամ թզուկ նախարարությունների թիվը դառնում է 13-ը: Փաստորեն, միայն Վասպուրականում ամենաքիչը գոնե 13 գավառներ հանդես են եկել ֆեոդալիզմի առաջացմանն ու ներթափանցմանը զուգահեռ, ուստի պլինիոսյան պրեֆեկտուրաների դարաշրջանում, Վասպուրականում ամենաշատը պետք է լիներ 22 վարչա-տարածքային միավորներ: Փաստորեն, մեզ մնում է պարզել ևս 57 այսպիսի գավառների հարցը, որոնք նույն ժամանակ ծևավորվել են մյուս 14 նահանգներում: Եթե հարցը զննենք միջին թվաբանականով, ապա յուրաքանչյուր նահանգում ստացվում է 4 «նորածին» գավառ՝ ֆեոդալիզմի արմատավորման հետ միասին:

Ահա թե ինչ ճանապարհով 120-ը չորս դար անց կարող էր վերածնել 190-ի: Այսօրինակ մասնատումների ճանապարհով իրենց ժամանակին անցել են պետությունների մեծ մասը, որը Հայաստանում տեղի է ունեցել Արշակունյաց դարաշրջանում՝ հիմնականում IV դարում: Փաստորեն Պլինիոսի

120 պրեֆեկտուրաների մասին վկայությունը ոչ թե կամայական թիվ է կամ էլ շփոթմունք, այլ լիովին օբյեկտիվ և խիստ կարևոր՝ հին Հայաստանի վարչա-տարածքային եարցերը լուսաբանելու առումով:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] Տես Plinii Secundii, Naturalis historiat, (LCL), Cambridge, Mass.-London, 1950-1962, V, 13,66, 20,83

[2] Նույն տեղում, VI, 10,27

[3] Տես И.Х. Дворецкий, Латинско-русский словарь, М. 1976, էջ 794, նաև նույնի Древнегреческо-русский словарь, т. II, М. 1958, էջ 1511

[4] Տես Հայ ժողովրդի պատմություն, հ. I, Հայաստանը նախնադարյան-համայնական և ստրկատիրական կարգերի ժամանակաշրջանում, խմբ. Ս.Տ. Երեմյանի, էջ 839-840, Եր. 1971 (հեղ. Ս.Տ. Երեմյան)

[5] Այս խնդիրը բազմակողմանի վերլուծվել է Բ.Հ. Հարությունյանի կողմից: Տես Բ.Հ. Հարությունյան, Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացույց»-ի, մ. Ա, (արևմտյան և հարավային գավառներ), Եր. 2001, էջ 5-42

[6] Այս կապակցությամբ տես Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, երկ. հ. Դ էջ 187-436, Ն. Ադոնց, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Քաղաքական կացությունը ըստ նախարարական կարգերի, Եր. 1987, էջ 266-330, И. Джавахов, Государственный строй древней Грузии и древней Армении,СПб. 1905, էջ 100-110, 126, 132-134...այլն

[7] Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, Դ,բ

[8] Ն. Ադոնց, նշվ. աշխ, էջ 271

[9] Տես Ս.Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի (փորձ VII դարի հայկական քարտեզի վերակազմության ժամանակակից քարտեզագրական հիմքի վրա), Եր. 1963, էջ 117

[10] Բ.Հ. Հարությունյան, նշվ. աշխ, էջ 370-371